

աշակերտեալ վարդապետօքն իւրովք լուսա-  
ւորէր զազգս մեր»<sup>26</sup> : Իսկ Գր. Դարանաղցի  
(էջ 284) կ'անուանէ զինքը «լուսահոգի տէր  
Մօսէս կուսակրօն սուրբ վարդապետն, լու-  
սաւորիչն արեւելեան եւ կարգաւորիչն ամե-  
նեցուն՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց,  
վանաց եւ անապատականաց» :

Ինչ որ կ'երգէր Երեմիա Քէօմիւրճեան  
իրբեւ արգիւնք Փիլիպպոս կաթողիկոսի գոր-  
ծունէութեան, հաւասարապէս կ'արժէր Մով-  
սէս կաթողիկոսի համար. որովհետեւ Մով-  
սէս էր որ տնկած էր ծառը, Փիլիպպոս աուած  
էր անոր ջուր, խնամած եւ պտուղը վայելած :  
Երեմիա կ'երգէ<sup>27</sup> .

Դպրատունք բացեալ, մարգարանք բանեալ  
աշակերտք վարժեալ.  
Դասատունք հաստեալ, վարժապետք յարգեալ,  
տէլէտք ճոխացեալ.  
Իմաստք յառաջեալ, գիտութիւնք անեալ,  
ըզնորհան որ ձրբեալ.  
Տեսուչք խրախուսեալ, փաղերայք փայլեալ,  
բարունիք ճեմեալ.  
Հոետորք հրազինեալ, իբր զսուրբ առաքեալ,  
քարոյք տարածեալ.  
Լոյսք լուսաւորեալ, աղք զհամս սփռեալ,  
ուսմանց պատճառք լեալ.  
Ամբիոնք վառեալ, ատեանք ցնծացեալ,  
ազգ Հայոց սփոփեալ :  
Արդ սահմանքն անեալ, կարգն պայծառացեալ,  
օրէնքն ճոխացեալ.

<sup>26</sup> Ձեռ. Երեւանի Պետ. Թանգ. 621 :

<sup>27</sup> Հ. Ն. Ակիւնեան, Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան,  
Կեանքն եւ գրական գործունէութիւնը, էջ 196—197 :